Հաստատված է
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ Վարչության
16.04.2026թ. թիվ 71/01-16.04.26 որոշմամբ
Վարչության նախագահ
Ա. Առաքելյան

Ուժի մեջ է մտնում 05.05.2026թ.
Հրապարակման ամսաթիվը 16.04.2026թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասն տեղեկատվության համար դիմել Բանկ

ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
«ԴԱՍԱԿԱՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ

ԵՐԵՎԱՆ 2026

«ԴԱՍԱԿԱՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) ֆիզիկական (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) և իրավաբանական անձ հաճախորդներից ներգրավում է «ԴԱՍԱԿԱՆ» ժամկետային ավանդը՝

1. առանց գումար ավելացնելու հնարավորության, կամ
2. գումար ավելացնելու հնարավորությամբ,

հետևյալ պայմաններով.

1 «ԴԱՍԱԿԱՆ» ժամկետային ավանդ՝ առանց գումար ավելացնելու հնարավորության

1.1 Արժույթ՝ ՀՀ դրամ (AMD)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ՝ 100,000 ՀՀ դրամ,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ ՝ 100,000,000* ՀՀ դրամ

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
91-182 օր	6.25%	6.43%	6.40%	6.59%	6.50%	6.61%	6.65%	6.76%
183-366 օր	7.75%	8.03%	7.90%	8.19%	8.25%	8.25%	8.40%	8.40%
367-545 օր	9.50%	9.92%	9.65%	10.09%	9.75%	9.53%	9.90%	9.67%
546-733 օր	9.75%	10.20%	9.90%	10.36%	10.00%	9.54%	10.15%	9.68%
734-1095 օր	10.00%	10.47%	10.15%	10.64%	10.25%	9.35%	10.40%	9.47%

1.2 Արժույթ՝ ԱՄՆ դոլար (USD)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ ՝ 200 ԱՄՆ դոլար,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ՝ 200,000* ԱՄՆ դոլար

«ԴԱՍԱԿԱՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
91-182 օր	1.90%	1.92%	2.05%	2.07%	2.00%	2.01%	2.15%	2.16%
183-366 օր	3.00%	3.04%	3.15%	3.20%	3.30%	3.30%	3.45%	3.45%
367-545 օր	4.10%	4.18%	4.25%	4.33%	4.30%	4.26%	4.45%	4.40%
546-733 օր	4.20%	4.28%	4.35%	4.44%	4.40%	4.31%	4.55%	4.45%
734-1095 օր	4.30%	4.39%	4.45%	4.54%	4.50%	4.31%	4.65%	4.45%

1.3 Արժույթ՝ ԵՎՐՈ (EUR)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ ՝ 200 ԵՎՐՈ,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ ՝ 200,000* ԵՎՐՈ

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
91-182 օր	0.50%	0.50%	0.65%	0.65%	0.75%	0.75%	0.90%	0.90%
183-366 օր	1.30%	1.31%	1.45%	1.46%	1.50%	1.50%	1.65%	1.65%
367-545 օր	2.10%	2.12%	2.25%	2.27%	2.25%	2.24%	2.40%	2.39%
546-733 օր	2.30%	2.32%	2.45%	2.48%	2.50%	2.47%	2.65%	2.62%
734-1095 օր	2.55%	2.58%	2.70%	2.73%	2.75%	2.68%	2.90%	2.82%

1.4 Արժույթ՝ Ռուսական ռուբլի (RUB)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ՝ 10,000 ՌԴ ռուբլի,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ՝ 20,000,000* ՌԴ ռուբլի

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
91-182 օր	4.00%	4.07%	4.15%	4.23%	4.25%	4.30%	4.40%	4.45%
183-366 օր	4.75%	4.85%	4.90%	5.01%	5.00%	5.00%	5.15%	5.15%
367-545 օր	5.50%	5.64%	5.65%	5.80%	5.75%	5.67%	5.90%	5.82%
546-733 օր	5.75%	5.90%	5.90%	6.06%	6.00%	5.83%	6.15%	5.97%
734-1095 օր	6.00%	6.17%	6.15%	6.33%	6.25%	5.90%	6.40%	6.03%

2 «ԴԱՍԱԿԱՆ» ժամկետային ավանդ՝ գումար ավելացնելու հնարավորությամբ***

2.1 Արժույթ՝ ՀՀ դրամ (AMD)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ՝ 100,000 ՀՀ դրամ,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ՝ 100,000,000* ՀՀ դրամ

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
183-366 օր	7.25%	7.50%	7.40%	7.66%	7.75%	7.75%	7.90%	7.90%
367-545 օր	9.00%	9.38%	9.15%	9.54%	9.25%	9.05%	9.40%	9.19%
546-733 օր	9.25%	9.65%	9.40%	9.82%	9.50%	9.08%	9.65%	9.22%
734-1095 օր	9.50%	9.92%	9.65%	10.09%	9.75%	8.93%	9.90%	9.06%

2.2 Արժույթ՝ ԱՄՆ դոլար (USD)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ՝ 200 ԱՄՆ դոլար,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ՝ 200,000* ԱՄՆ դոլար

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
183-366 օր	2.75%	2.78%	2.90%	2.94%	3.05%	3.05%	3.20%	3.20%
367-545 օր	3.85%	3.92%	4.00%	4.07%	4.05%	4.01%	4.20%	4.16%
546-733 օր	3.95%	4.02%	4.10%	4.18%	4.15%	4.07%	4.30%	4.21%
734-1095 օր	4.05%	4.13%	4.20%	4.28%	4.25%	4.08%	4.40%	4.22%

2.3 Արժույթ՝ ԵՎՐՈ (EUR)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ՝ 200 ԵՎՐՈ,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ՝ 200,000* ԵՎՐՈ

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
183-366 օր	1.05%	1.06%	1.20%	1.21%	1.25%	1.25%	1.40%	1.40%
367-545 օր	1.85%	1.87%	2.00%	2.02%	2.00%	1.99%	2.15%	2.14%
546-733 օր	2.05%	2.07%	2.20%	2.22%	2.25%	2.23%	2.40%	2.37%
734-1095 օր	2.30%	2.32%	2.45%	2.48%	2.50%	2.44%	2.65%	2.58%

2.4 Արժույթ՝ Ռուսական ռուբլի (RUB)

Ավանդի ներդրման նվազագույն շեմ/մնացորդ ՝ 10,000 ՌԴ ռուբլի,
Ավանդի ներդրման առավելագույն շեմ/մնացորդ ՝ 20,000,000* ՌԴ ռուբլի

Ավանդի ժամկետ	Տոկոսների վճարումը՝ ամսական				Տոկոսների վճարումը՝ ժամկետի վերջում			
	Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում		Բանկի գործունեության վայրում ներդնելու դեպքում**		«AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ներդնելու դեպքում	
	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
183-366 օր	4.50%	4.59%	4.65%	4.75%	4.75%	4.75%	4.90%	4.90%
367-545 օր	5.25%	5.38%	5.40%	5.54%	5.50%	5.43%	5.65%	5.57%
546-733 օր	5.50%	5.64%	5.65%	5.80%	5.75%	5.59%	5.90%	5.73%
734-1095 օր	5.75%	5.90%	5.90%	6.06%	6.00%	5.67%	6.15%	5.81%

**Առավելագույն գումարը գերազանցող ծավալով ավանդը ընդունվում է կողմերի համաձայնությամբ՝ սահմանվելով պայմանագրով:*

** ***Ավանդի ընդունման ծառայություն մատուցվում է Բանկի Գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում (ցանկին կարող եք ծանոթանալ՝ https://www.aeb.am/hy/branch-service-network), բացառությամբ Բանկի «ԱՐԱՐԱՏՅԱՆ» և «ՍԻԼԱՉԻ» մասնաճյուղերի, որտեղ տվյալ ծառայությունը չի մատուցվում:***

*** Ավանդատուն լրացուցիչ գումարներ կարող է ավելացնել (որոնց նկատմամբ հաշվարկվում են ավանդային պայմանագրի 2.1 կետով սահմանվող տոկոսները) միայն 183 օր կամ ավելի ժամկետով ներդրված (երկարաձգված) Ավանդին վերադարձման ժամկետին նախորդող մինչև 180-րդ օրը ներառյալ և առավելագույնը ավանդային պայմանագրի կնքման (երկարաձգման) պահին ներդրված Ավանդի գումարի հնգապատիկի չափով, բայց ոչ ավել Ավանդի համար սահմանված գումարային առավելագույն շեմից:

Տարեկան տոկոսային եկամտաբերություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ՝ https://www.arlis.am/hy/acts/53049 :

Տոկոսագումարի ամսական վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ հետևյալ բանաձևով.

$$APY = (1+r/n)^{n} - 1$$

որտեղ՝

1. APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
2. r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
3. n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Տոկոսագումարի ժամկետի վերջում վճարմամբ ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է՝ ելնելով հետևյալ բանաձևից ՝

$$A= \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+APY)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

1. A - ավանդի սկզբնական գումարն է:
2. n - ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարն է:

3. N - ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարն է (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված:
4. K_n - ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքեր:
5. Dn – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:
6. Ավանդի ժամկետի համար հիմք է ընդունվում ներգրավման ժամկետի յուրաքանչյուր միջակայքի առավելագույն արժեքը:

Ընդհանուր պայմաններ

1. Ավանդի տեսակը՝ ժամկետային:
2. Ավանդը ներդրվում է նվազագույնը 91 և առավելագույնը 1095 օր ժամկետով:
3. Հաշվեգրված տոկոսագումարը չի կապիտալացվում և վճարվում է Ավանդատուին ամսական պարբերականությամբ կամ ավանդային պայմանագրի ժամկետի վերջում:
4. Տոկոսագումարը հաշվարկվում է ներդրված Ավանդի փաստացի մնացորդի վրա: Հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով տարվա փաստացի օրերի քանակը 365 օր, իսկ նահանջ տարվա համար՝ 366 օր:
5. Ավանդի տոկոսները հաշվարկվում են Ավանդը Բանկում ընդունվելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու նախորդ օրը:
6. Արտարժութային ավանդի տոկոսները ավանդային պայմանագրով կամ Ավանդատուի դիմումի համաձայն ՀՀ դրամով վճարվելու դեպքում փոխարկումը կատարվում է՝ հիմք ընդունելով տոկոսների վճարման նախորդ օրը ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:
7. Ավանդի տոկոսները Ավանդատուի կողմից չստանալու դեպքում՝ դրանց վրա տոկոսներ չեն հավելագրվում:
8. Սույն ավանդատեսակով ներգրավվող ավանդների /մնացորդի/ համար սույն ամփոփագրով գործող նվազագույն շեմից պակաս չի կարող կազմել ներդրվող ավանդը/մնացորդը/, ինչպես նաև առավելագույն շեմից ավել չի կարող կազմել ներդրվող ավանդը/մնացորդը/,

բացառությամբ ավանդային պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված դեպքերի:

9. Ավանդը կամ դրա մասը մինչև ավանդային պայմանագրով սահմանված վերադարձման ժամկետը լրանալը պահանջելու դեպքում համապատասխանաբար Ավանդի կամ պահանջվող մասի դիմաց ավանդային պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսների փոխարեն հաշվարկվում են տոկոսներ՝ տարեկան 0% տոկոսադրույքի չափով, իսկ եթե Ավանդատուին արդեն վճարվել են ավանդային պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսները, ապա վճարված տոկոսագումարի չափով Ավանդը համարվում է վերադարձված:

10. Ավանդի վերադարձման ժամկետը լրանալու օրը Ավանդը չպահանջելու դեպքում (եթե Ավանդի վերադարձման այլ ժամկետ չի սահմանվել կողմերի համաձայնությամբ) պայմանագրում համաձայնության առկայության պարագայում Ավանդի վերադարձման ժամկետը կարող է ինքնաբերաբար երկարաձգվել նախորդ ժամկետով (շարունակաբար, բայց ոչ ավել երեք անգամից), և Ավանդի դիմաց կհաշվարկվեն տոկոսներ տվյալ ավանդատեսակի համար երկարաձգման օրվա դրությամբ Բանկի սահմանած տոկոսների չափով: Եթե տվյալ ավանդատեսակի գործողությունը Բանկի կողմից դադարեցվել է, ապա Ավանդի վերադարձման ժամկետը ինքնաբերաբար չի երկարաձգվում, և մինչև Ավանդի փաստացի պահանջվելը Ավանդի դիմաց հաշվարկվում են տոկոսներ՝ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:

11. Եթե Ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են պայմանագրի երկարաձգված ժամկետում, ապա նախորդ ժամկետի(ների) համար վճարվում է ավանդային պայմանագրով սահմանված տոկոսագումարը, իսկ տվյալ ժամկետի համար Ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում է տոկոսագումար՝ սույն ամփոփագրի 9. կետի դրույթներին համապատասխան:

12. Ավանդի ավելացումից հետո Ավանդի կամ դրա մասի վաղաժամկետ վերադարձի պահանջի դեպքում՝ ըստ ժամանակային հաջորդականության վերադարձվում են սկզբնական ներդրված գումարները, այնուհետև ավելացումները՝ համաձայն սույն ամփոփագրի 9. կետի դրույթների:

13. Բանկը չի կարող ավանդային պայմանագրի գործողության ընթացքում միակողմանի նվազեցնել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը:

14. Եթե Ավանդի վերադարձման ժամկետը լրանալուց հետո Ավանդը չի պահանջվել, և Ավանդի վերադարձման ժամկետը չի երկարաձգվել, ապա մինչև Ավանդի փաստացի պահանջվելը դրա դիմաց հաշվարկվում են տոկոսներ Բանկում գործող բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների համար Բանկի սահմանած տոկոսների չափով:

15. Բանկն ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, Ավանդատուին տրամադրում է իր ավանդային հաշվի վերաբերյալ քաղվածք ավանդային պայմանագրում կամ Ավանդատուի դիմումով նշված

եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել: Բանկը Ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում պարտավոր է տրամադրել հաշվի քաղվածք՝ Բանկի հայտարարած սակագներով, ընդ որում՝

- ***Ֆիզիկական անձ հաճախորդներին քաղվածքը տրամադրվում է անվճար***:
- Իրավաբանական անձ հաճախորդներին քաղվածքը տրամադրվում է «Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների» տեղեկատվական ամփոփագրով (կարող եք ծանոթանալ՝ https://www.aeb.am/hy/conditions-and-tariffs) քաղվածքների տրամադրման համար սահմանված սակագնով:

16. Երրորդ անձանց կողմից ավանդը չի կարող համալրվել:

Այլ անձանց կողմից ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) Ավանդատուի Ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է նոտարով (վերջինիս հավասարեցված անձանց) վավերացված լիազորագրով կամ Բանկում անձամբ Ավանդատուի կողմից՝ պաշտոնատար անձի ներկայությամբ և հաստատումով ձևակերպված ու ստորագրված գրավոր լիազորագրով:

Այլ անձանց կողմից իրավաբանական անձ ավանդատուի ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է իրավաբանական անձի իրավասու մարմնի (անձի) ստորագրությամբ և իրավաբանական անձի կնիքով (ստորագրությունների և կնիքի դրոշմի նմուշների քարտում կնիքի նմուշի առկայության դեպքում) ձևակերպված գրավոր լիազորագրով:

17. Հաճախորդը կարող է Բանկին ներկայացնել իր հարցերը, առաջարկները, բողոքները, պահանջները՝ Բանկին գրավոր դիմելով, որին 10 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից տրվում է պատասխան:

18. Հաճախորդն իր բողոք-պահանջները կարող է ներկայացնել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Բանկը հրաժարվել է վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի այն որոշումները, որոնցով գույքային պահանջի չափը չի գերազանցում 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը:

19. Հաճախորդի և Բանկի միջև ծագած վեճերը բանակցություններով չլուծվելու դեպքում կարող են լուծվել Արբիտրաժի կամ ՀՀ իրավասու մարմնի (ՀՀ դատարաններ, ՀՀ նոտարներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում) միջոցով:

20. Ավանդատուին վճարվող տոկոսները հարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով: Բանկը հանդիսանում է հարկային գործակալ ֆիզիկական անձ հաճախորդների համար, որոնցից ներգրավված ավանդների դիմաց վճարվող տոկոսագումարները

ենթակա են հարկման ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով և չափով:

21. Առանձին հաճախորդների համար կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել տարեկան անվանական տոկոսադրույքի այլ չափ և/կամ ավանդի այլ պայման:

Երաշխավորված ավանդի չափեր

Ավանդների հատուցումը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Վերոնշյալ օրենքով սահմանված կարգով երաշխավորված ավանդի չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

«ԴԱՍԱԿԱՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Տոկոսների հաշվարկման օրինակներ

Առանց Ավանդին գումար ավելացնելու հնարավորության Բանկի գործունեության վայրում ավանդը ներդնելու դեպքում		
Ներդրված գումար	5,000,000 ՀՀ դրամ	
Տոկոսների վճարում	Ամսական	Ժամկետի վերջում
Ավանդի ժամկետ /օր/	367	367
Անվանական տոկոսադրույք	9.50%	9.75%
Ստացվելիք տոկոսներ մինչև եկամտային հարկով հարկվելը (ՀՀ դրամ)	477,602.70	490,171.20
Ստացվելիք տոկոսներ եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո (ՀՀ դրամ)	429,842.50	441,154.10

Ավանդին գումար ավելացնելու հնարավորությամբ Բանկի գործունեության վայրում ավանդը ներդնելու դեպքում		
Ներդրված գումար	10,000 ԱՄՆ դոլար	
Տոկոսների վճարում	Ամսական	Ժամկետի վերջում
Ավանդի ժամկետ /օր/	400	400
Անվանական տոկոսադրույք	3.85%	4.05%
Ստացվելիք տոկոսներ մինչև եկամտային հարկով հարկվելը (ԱՄՆ դոլար)	421.92	443.84
Ստացվելիք տոկոսներ եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո (ԱՄՆ դոլար)	379.73	399.45

«ԴԱՍԱԿԱՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

Առանց Ավանդին գումար ավելացնելու հնարավորության «AEB Online»/«AEB Mobile» համակարգերով ավանդը ներդնելու դեպքում		
Ներդրված գումար	20,000 ԵՎՐՈ	
Տոկոսների վճարում	Ամսական	Ժամկետի վերջում
Ավանդի ժամկետ /օր/	550	550
Անվանական տոկոսադրույք	2.45%	2.65%
Ստացվելիք տոկոսագումար մինչև եկամտային հարկով հարկվելը (ԵՎՐՈ)	738.36	798.63
Ստացվելիք տոկոսագումար եկամտային հարկով (10%) հարկվելուց հետո (ԵՎՐՈ)	664.52	718.77

Վերոնշյալ հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր:

Այլ դրույթներ

ԲԱՆԿԸ «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՐՈՂ Է «ՃԱՆԱՉԻՐ ՔՈ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ» («KNOW YOUR CUSTOMER») ՍԿԶԲՈՒՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՀԱՆՋԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ ՏԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ (FOREIGN ACCOUNT TAX COMPLIANCE ACT (FATCA)) ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՄՆ-Ի ՀԵՏ ԿՆՔԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԲԱՆԿԸ ՀԱՃԱԽՈՐԴԻ՝ ԱՄՆ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՅԼ ԵՐԿՐԻ ՀԱՐԿԱՏՈՒ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՏՀԶԿ) ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

ՀԻՄԱՆ ՎՐԱ:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»՝ www.fininfo.am, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:

Ավանդը ներդնելու համար պահանջվում է

- Ավանդատուի (նրա ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթուղթ,
- Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ (օտարերկրյա քաղաքացիների համար՝ առկայության դեպքում), կամ
- Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք,
- Համապատասխան արժույթով բանկային հաշվի բացում (համապատասխան արժույթով բանկային հաշիվ չունենալու դեպքում): Բանկային հաշվի բացումն ու սպասարկումն իրականացվում են՝ համաձայն «Բանկային ծառայությունների մատուցման» ընդհանուր պայմանների և «Հաշիվների բացման, սպասարկման և այլ ծառայությունների» տեղեկատվական ամփոփագրի (կարող եք ծանոթանալ՝ https://www.aeb.am/hy/conditions-and-tariffs): Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից սույն ավանդը ներդնելիս տվյալ ստորաբաժանումում համապատասխան արժույթով բանկային հաշիվ չունենալու դեպքում հաշվի բացման սակագինը սահմանվում է անվճար, ինչպես նաև վերջիններիս կողմից ներդրված արտարժութային ավանդների տոկոսները ՀՀ դրամով ստանալու ցանկության դեպքում տվյալ ստորաբաժանումում դրամային բանկային հաշիվ չունենալիս հաշվի բացման սակագինը սահմանվում է անվճար:
- Ելնելով տարաբնույթ հանգամանքներից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Հատուկ առաջարկներ

Ելնելով ավանդի ծավալից՝ Բանկը ավանդատուներին տրամադրում է անվճար տարեկան սպասարկման վարձով վճարային քարտ՝

- Մինչև 10,000,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) ներդնելու դեպքում՝ Visa Classic/Mastercard Standard/ArCa Classic քարտատեսակներից որևէ մեկը,
- 10,000,001 – 30,000,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) ներդնելու դեպքում՝ Visa Classic/Mastercard Standard/ArCa Classic/Visa Gold/Mastercard Gold քարտատեսակներից որևէ մեկը,
- 30,000,001 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավել ներդնելու դեպքում՝ Visa Classic/Mastercard Standard/ArCa Classic/Visa Gold/Mastercard Gold/Visa Platinum քարտատեսակներից որևէ մեկը:

Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները սահմանված են «Վճարային քարտերի և քարտային հաշվի» տեղեկատվական ամփոփագրով (կարող եք ծանոթանալ՝ https://www.aeb.am/hy/conditions-and-tariffs):